5352

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«07» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 119-25

Նախաձեռնող՝ «Զանգեզուր պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
ք. Քաջարան, Լեռնագործների 18, 3309

Գործունեությունը՝ Արծվանիկի պոչամբարային տնտեսության թիվ 1, 2 և 4 դյուկերային անցումներում նոր խողովակաշարերի կառուցում
Սյունիքի մարզ

Առդիր՝ 11 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 119-25

«07» մայիս **2025թ.**

Արծվանիկի պոչամբարային տնտեսության թիվ 1, 2 և 4 դյուկերային անցումներում նոր խողովակաշարերի կառուցման նախագծային փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՄԿ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Կապան և Քաջարան քաղաքներ

Ներածական մաս. «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՄԿ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ «ԶՊՄԿ» ՓԲԸ կամ Կոմբինատ) կայուն զարգացման քաղաքականության շրջանակներում նախատեսում է արտադրական գործունեության բնապահպանական, սոցիալական և անվտանգային բաղադրիչների բարելավում: Նախագծով նախատեսված Քաջարանի Արծվանիկի պոչամբարի տնտեսության թիվ 1, 2 և 4 դյուկերային անցումներում նոր խյուսատար խողովակների կառուցման նախագծային փասաթղթերը կազմվել են «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի և «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ միջև կնքված «Աշխատանքների կատարման մասին» պայմանագրի շրջանակներում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ բ. ենթակետի՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ կողմից նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի:

Կոմբինատի կազմում ներառված են Քաջարանի պղնձմոլիբդենային հանքավայրն (բացահանքը) իր լցակույտային տնտեսությամբ, հարստացուցիչ ֆաբրիկան և Արծվանիկի պոչամբարը: Կոմբինատը ձեռք է բերել 22 մլն. տ/տարի արդյունահանման թույլտվություն (պետական փորձաքննական ԲՓ 108 դրական եզրակացություն՝ հաստատված 2016 թվականի դեկտեմբերի 16-ին): Գործող բացահանքը գտնվում է Քաջարան քաղաքից 1.7-2.7 կմ հեռավորության վրա՝ Ողջի գետի աջակողմյան հատվածում: Հարստացուցիչ ֆաբրիկան գտնվում է Ողջի գետի ձախակողմյան հատվածում քաղաքի բնակելի հատվածից 300 մ հեռավորության վրա: Գործող Արծվանիկ պոչամբարը տեղադրված է Ողջի գետի ձախափնյա՝ Արծվանիկ վտակի կիրճում՝ հարստացուցիչ ֆաբրիկայից 34.5 կմ հեռավորության վրա /նիշերի տարբերությունը կազմում է 800.0 մ, բաց տեղամասերը՝ 12.3կմ, թունելային տեղամասերը՝ 17.4կմ, դյուկերները՝ 4.8կմ/: Պոչամբարի ազդեցության բացառման նպատակով գետի հոսքը ուղղվում է Ողջի գետ՝ ջրհեռացման ջրանցքի միջոցով:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

«ԶՊՄԿ» ՓԲԸ-ի հարստացուցիչ ֆաբրիկայից պոչերը պոչատարների համակարգով, ինքնահոս եղանակով տեղափոխվում են Արծվանիկի պոչամբար: Այն անցնում է խիստ կտրտված խորը կիրճերով, թունելներով և թիվ 1, 2 և 4 դյուկերներով՝ 10-250 մ երկարությամբ կամրջային անցումներով: Թիվ 1, 2 և 4 դյուկերները բաղկացած են իրար զուգահեռ տեղադրված 3 պողպատե խողովակաշարերից, որոնցից 2-ը ունեն՝ Ø720×10 մմ տրամագիծ, իսկ մեկը՝ Ø1020×10 մմ: Խողովակաշարերը տեղադրված են միջանկյալ և խարսխային հենարանների վրա:

Ներածական մաս Աշխատանքային նախագծով նախատեսվում է թիվ 1, 2 և 4 դյուկերների համար կառուցել նոր խյուսատարեր, յուրաքանչյուրը՝ Ø1220×12 մմ t=50 մմ քարաձուլվածքային ներպատումով մետաղական խողովակաշարերով, որոնք անցնելու են գործող պոչատար խողովակներին զուգահեռ: Այն տեղամասերում, որտեղ պոչատարի ուղեգիծը հանդիպում է լայն ու խոր ձորի, կառուցվելու է ճնշումային խողովակաշարեր՝ դյուկերներ: Թիվ 1 դյուկերն ունենալու է 830 մ, թիվ 2 դյուկերը՝ 570 մ, իսկ թիվ 4 դյուկերը՝ 3870 մ երկարություն: Պողպատե խողովակներից դյուկերները կարող են աշխատել գործնականորեն ցանկացած ճնշման դեպքում: Դյուկերները կարող են լինել մեկ և մի քանի գծանի, իսկ խողովակները՝ տեղադրված մակերևույթին կամ թաղված:

Թիվ 1 և թիվ 2 դյուկերային անցումները գտնվում են Քաջարան համայնքի, իսկ թիվ 4-ը՝ Կապան համայնքի վարչական սահմաններում: Թիվ 1 դյուկերի հեռավորությունը մոտակա բնակավայրերից կազմում է 0.7-4.7 կմ, թիվ 2 դյուկերի հեռավորությունը՝ 0.54-4.7 կմ, թիվ 4 դյուկերի հեռավորությունը՝ 1.07-3.07մ: Դյուկերների համար լրացուցիչ հողհատկացում չի պահանջվում:

Աշխարհագրորեն դիտարկվող տարածքը գտնվում է ՀՀ հարավ-արևմուտքում՝ Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերին: Տարածքն ընդգրկում է Ողջի գետի վերին ավազանը և Գեղի գետի ավազանն ամբողջությամբ: Ողջին տիպիկ լեռնային գետ է: Ողջի գետի խոշոր վտակներն են Գեղին և Նորաշենիկը, մյուս վտակները փոքր են՝ աննշան հոսքերով: Շրջանի հիդրոերկրաբանական կառուցվածքը պայմանավորված է ռելիեֆի խիստ կտրտվածությամբ, լանջերի զառիթափությամբ, ինտրուզիվ ապարների գերակշիռ զարգացմամբ (ճեղքային տիպի ջրերի շրջապտույտով), ջրաբերուկների համեմատաբար աննշան հզորությամբ և բուսական խիտ ծածկույթի բացակայությամբ: Ողջի գետի ավազանին բնորոշ է ապարների թույլ ջրանցիկություն, այդ իսկ պատճառով մթնոլորտային տեղումները բերում են մակերևութային հոսքի առաջացմանը, ինչի արդյունքում գետի ավազանն ունի զարգացած ջրագրական ցանց:

Նախատեսվող գործունեության իրականացման համար դիտարկվել են այլընտրանքային տարբերակների դրական և բացասական կողմերի վերլուծությունը, ինչի հիման վրա կատարվել է ամենանպատակահարմար տարբերակի ընտրությունը:

Թիվ 1 դյուկերը գտնվում է Քաջարան քաղաքից մոտ 8 կմ դեպի արևելք: Դյուկերը կառուցված է Գեղի գետի կիրճում, հատում է Գեղի գետը և Կապան-Գեղի ավտոճանապարհը: Գետի հատվածում կառուցված է մետաղական էստակադա: Նախագծով նախատեսվում է կառուցել նոր խյուսատար Ø1220×12մմ t=50մմ քարաձուլվածքային ներպատումով մետաղական խողովակաշար, որի երկարությունը կազմում է 830 մ: Ամբողջ ծրագծի երկայնքով նախատեսված է 11 հատ խարսխային հենարաններ, որից 10-ը ե/բ տիպի է, իսկ 1-ը՝ էստակադի հատվածում, մետաղական տիպի է: Խարսխային հենարանների միջակայքում նախատեսված են 27 միջանկյալ երկաթբետոնե և մետաղական հենարաններ, որոնց մոտ նախատեսվում են 1200 մմ կոմպենսատորներ: Խողովակաշարի ամբողջ երկարությամբ՝ բացառությամբ էստակադայի հատվածի, նախատեսված են ե/բ վաքեր և ամրակնահարթակ: Ե/բ վաքերը նախատեսված են վթարային ելքերը դեպի գետերում ունեցող հակավթարային

և սպասարկման ավազաններ կազմակերպված ուղղորդելու նպատակով: Դյուկերի մուտքամասի մոտ՝ առկա վաքի աջակողմյան հատվածում, նախատեսվում է մուտքամասային հոր՝ ե/բ կառուցվածքով: Խյուսատարի հոսքը կարգավորելու նպատակով առկա վաքի վերջնամասում խյուսի հոսքը դեպի նոր մուտքամասային հոր, այնուհետև ճնշումային խողովակաշար ուղղորդելու նպատակով նախատեսվում են հարթ փականներ: Գեղի գետի հատվածում խյուսատարի սպասարկումը և շահագործումը կատարելու նպատակով խյուսատարի աջ կողմում նախատեսված է էստակադա, որն իրենից ներկայացնում է մետաղական էլեմենտներից կառուցված հարթակ: Հեռացնող վաքի վրա նախատեսվում են կարգավորիչ փականներ և սպասարկման մետաղական հարթակ: Հեռացնող վաքը գործող թունելի վաքին լծորդելու համար նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

- քանդվում են առկա թունելի պատերը և թաղը,
- հեռացնող վաքը լծորդվում է առկա վաքին,
- նախատեսվում է թունելի նոր մուտքամաս:

Թիվ 1 դյուկերի տարածքում հակավթարային ավազան և սպասարկման ավազանի պատվարը հողային տիպի է, ջրամեկուսիչ շերտ է հանդիսանում 80 սմ հաստությամբ տոփանված կավը: Նախագծով հակավթարային և սպասարկման ավազանի պատվարը իրականացվելու է քարալիցքից, իսկ անցումային գոտիները՝ ավազից և խճավազից: Պատվարի առավելագույն բարձրությունը՝ 2.4 մ է, վերևի շեպի թեքությունը՝ 1:1.8, իսկ ներքևի շեպի թեքությունը՝ 1:1.5: Պատվարի կատարի լայնությունը՝ 4.5 մ է: Հակավթարային և սպասարկման ավազանի ծավալը կազմում է 8500 մ^3:

Խողովակաշարի վթարի դեպքում խյուսերի տեղափոխումն անմիջապես իրականացվելու է պահուստային խողովակաշարերով: Հակավթարային և սպասարկման ավազանին կից նախատեսվել է դրենաժային համակարգ, որը կբացառի գրունտային և մակերևութային ջրերի մուտքը դեպի ավազան: Դրենաժում հավաքվող ջրերը թափվում են դեպի Գեղի գետ: Խյուսը ավազանում ջրազրկվելուց հետո, չորացած խյուսերը տեղափոխվում են Արծվանիկի պոչամբար: Ջրազրկման նպատակով, ավազանում ջուրը լցվում է ջրընդունիչ հոր, այնտեղից էլ պոմպակայան:

Թիվ 2 դյուկերը գտնվում է Քաջարան քաղաքից մոտ 12 կմ դեպի արևելք, կառուցված է Գիրաթաղ գետի կիրճում: Այն հատում է Գիրաթաղ գետը և Կապան-Ներքին Գիրաթաղ ավտոճանապարհը: Նախագծով նախատեսվում է կառուցել նոր խյուսատար՝ Ø1220x12մմ t=50մմ քարաձուլվածքային ներպատումով մետաղական խողովակաշար, որի երկարությունը մոտ 570 մ է: Այն իրենից ներկայացնում է պողպատե խողովակաշար՝ երկու Ø720×10 մմ և մեկ Ø1020×10 մմ, ներպատված քարե ձուլվածքով: Մուտքի և ելքի գլխամասերի նիշերը համապատասխանաբար կազմում են՝ 1380 մ և 1368 մ: Խողովակները նախատեսված են գետնի մակերեսին բետոնյա խարսխային հենարանների վրա և ամրացված են հատուկ խարսխային հեղյուսներով, միջանկյալ հենարանները նույնպես բետոնյա են: Ամբողջ ծրագծի երկայնքով նախատեսված է տեղադրել 7 հատ՝ ե/բ տիպի խարսխային հենարաններ, որոնց միջակայքում տեղադրվելու են 18 միջանկյալ ե/բ հենարաններ, որոնց մոտ նախատեսվում են 1200 մմ կոմպենսատորներ: Խողովակաշարի ամբողջ երկարությամբ, բացառությամբ սպասարկման ավազանի, նախատեսված են ե/բ վաքեր և աստիճանահարթակ: Ե/բ վաքերը նախատեսված են վթարային ելքերը դեպի գոյություն ունեցող հակավթարային և սպասարկման ավազաններ կազմակերպված ուղղորդելու նպատակով: Գետի հատվածում խյուսատարի սպասարկումը և շահագործումը կատարելու նպատակով, առկա հակավթարային և սպասարկման ավազանների պատերը նոր խողովակաշարի հատվածում պետք է բարձրացվեն մոտ 50 սմ և տեղադրվեն խարիսխներ: Առկա ավազանի հատվածում նախատեսվում է

խյուսատարի դատարկման հանգույց: Սպասարկման ավազանների մեջտեղում Գիրաթաղ գետը վերցված է երկաթբետոնե վաքի մեջ, որը հնարավորություն ունի բաց թողնել 100 տարի ապահովվածության առավելագույն ելքերը: Սպասարկման ավազան №1-ի ծավալը կազմում է 1050 մ^3, իսկ №2-ի ծավալը՝ 950.0 մ^3: Սպասարկման ավազանները լցվելու դեպքում №2 ավազանից Ø1420×10 մմ մետաղական խողովակով խյուսը տեղափոխվում է դեպի նախատեսվող հակավթարային և սպասարկման ավազան՝ համապատասխան ջրամեկուսիչ շերտերով: Ջրամեկուսիչ շերտեր են հանդիսանալու տոփանված կավը և δ=1.5 մմ հաստությամբ գեոմեմբրանը: Սպասարկման և հակավթարային ավազանների ընդհանուր ծավալը կազմում է 5500 մ^3:

Դյուկերի ներքևի նիշում գոյություն ունեցող պոմպակայանի միջոցով ջուրը մղվելու է դեպի մուտքի գլխամասի մոտ գոյություն ունեցող 1000 մ^3 տարողությամբ ջրի ռեզերվուար: Այն օգտագործվելու է խողովակաշարի լվացման համար: Դյուկերի Ø1020×10 մմ խողովակաշարի ներքևի նիշում միացված է Ø530×8 մմ խողովակ, որի վրա տեղադրված է փական: Այն նախատեսված է խողովակաշարը դատարկելու համար: Դյուկերը դատարկելուց հետո անհրաժեշտ է խողովակաշարը լվանալ՝ գոյություն ունեցող լվացման համակարգով:

Դյուկերի խողովակաշարերի սպասարկման համար առկա են սպասարկման ավտոճանապարհներ: Խողովակաշարը սպասարկելու համար նախատեսվում են մետաղական և ե/բետոնյա աստիճաններ: Գործող՝ Ø1020×10 մմ խողովակաշարի տակ առկա է ե/բետոնյա վաք, որպեսզի խողովակաշարի վթարի դեպքում խյուսերն ուղորդվեն ավազաններ և բացառվի շրջակա միջավայրի աղտոտումը:

Թիվ 2 դյուկերի տարածքում նախատեսվում է նաև իրականացնել գոյություն ունեցող թունելի վերանորոգում և նոր՝ մոտ 1100 մ երկարությամբ երկաթբետոնե վաքի կառուցում, որի հիմնական նպատակն է ապահովել պոչանքների առավել անվտանգ, վերահսկելի և արդյունավետ տեղափոխումը՝ նվազեցնելով հնարավոր բնապահպանական և տեխնիկական ռիսկերը: Վերանորոգվող թունելը սկիզբ է առնում գոյություն ունեցող թիվ 4 թունելի միջնամասից, իսկ ելքմասը գտնվում է Գիրաթաղ գետի կիճում՝ Դյուկեր 2-ի մուտքամասային հորից մոտ 900 մ դեպի հյուսիս: Կառուցները նախատեսված են օպտիմալացնելու պոչատար համակարգի անխափան շահագործումը, նվազեցնելու գերբեռնվածությունը և հնարավոր արտահոսքերը, ինչպես նաև բարելավելու տեխնիկական սպասարկման և վերանորոգման աշխատանքների կազմակերպումը: Հաշվի առնելով պոչատարի տեղանքի առանձնահատկությունները՝ նոր վաքի ուղեգիծը նախագծվում է տեղանքի բնական ռելիեֆին նվազագույն միջամտությամբ՝ միաժամանակ ապահովելով անհրաժեշտ հիդրավլիկ հաշվարկների համապատասխանությունը և սեյսմակայունության չափանիշները:

Թիվ 4 դյուկերը գտնվում է Քաջարան քաղաքից մոտ 32 կմ դեպի արևելք, կառուցված է Նորաշենիկ գետի կիրճում: Այն հատում է Նորաշենիկ գետը և Կապան-Նորաշենիկ ավտոճանապարհը: Խողովակները տեղադրված են գետնի մակերեսին բետոնյա խարսխային հենարանների վրա և ամրացված են խարսխային հեղյուսներով, միջանկյալ հենարանները նույնպես բետոնյա են:

Նախագծով նախատեսվում է կառուցել նոր խյուսատար՝ Ø1220x10 մմ, Ø1220x12 մմ և Ø1220x14 մմ t=50 մմ քարաձուլվածքային ներպատումով մետաղական խողովակաշար, որի երկարությունը կազմում է 3780 մ: Խողովակները նախատեսված են միջանկյալ և խարսխային հենարանների վրա, որոնց մոտ նախատեսվում են 1200 մմ կոմպենսատորներ: Խողովակաշարի ամբողջ երկարությամբ՝ բացառությամբ էստակադայի հատվածի, նախատեսված են երկաթբետոնե վաքեր և աստիճանահարթակ: Երկաթբետոնե վաքերը նախատեսված են վթարային ելքերը դեպի

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

գոյություն ունեցող հակավթարային և սպասարկման ավազան կազմակերպված ուղղորդելու նպատակով: Հակավթարային և սպասարկման ավազանի ծավալը կազմում է 28480.0մ³: Վարընթաց տեղամասից վթարային ելքերը ուղղորդվում են դեպի գոյություն ունեցող մետաղական խողովակ, իսկ վերընթաց տեղամասից՝ Կապան-Նորաշենիկ մայրուղու մոտ առկա վաք: Աստիճանահարթակները նախատեսված են խողովակաշարի աջ կողմում, ամբողջ ծրագծին սպասարկելու համար:

Նախատեսվում է կառուցել նոր մուտքամաս մոտ 1120.0 նիշում, որն իրենից ներկայացնում է երկաթբետոնե կառուցվածք: Մուտքամասային հորը ծածկվում է մետաղական հետիոտնային հարթակով, իսկ գոյություն ունեցողի վրա նախատեսվում են էլեկտրական հարթ փականներ: Մուտքամասային հորի վրա նախատեսված է նաև 1.2 մ բարձրությամբ մետաղական բազրիք: Նորաշենիկ գետի հատվածում խյուսատարի սպասարկումը և շահագործումը կատարելու նպատակով խյուսատարի աջ կողմում նախատեսված է էստակադա, որն իրենից ներկայացնում է մետաղական էլեմենտներից կառուցված հարթակ: Էստակադային հատվածում նախատեսված է 4 հատ միջանկյալ մետաղական հենարաններ և խարսխային մետաղական հենարան: Խողովակաշարի ներքևի մասում նախատեսվում է խյուսատարի դատարկման հանգույց: Ø530x8 մմ մետաղական խողովակաշարի միջոցով խյուսը տեղափոխվում է գոյություն ունեցող հակավթարային և սպասարկման ավազան: Դյուկերի վերջնամասում 1042.0 նիշում նախատեսվում է նոր ելքամասային հոր: Գոյություն ունեցող երկու՝ Ø720x10 մմ և մեկ Ø1020x10 մմ խողովակաշարերը սկզբնամասից երկարացվում են մինչև նոր մուտքամասային հոր՝ մոտ 500մ:

Դյուկերների խողովակաշարերի սպասարկման համար առկա են ավտոճանապարհներ: Դյուկերների ամբողջ տարածքները հսկվելու են անվտանգության աշխատակիցների կողմից: Տարածքում կան աշխատասենյակներ՝ անվտանգության և դյուկերի սպասարկման աշխատակիցների համար: Հակավթարային ավազանի ամբողջ պարագծով նախատեսվում է տեղադրել մետաղական ցանցով ցանկապատ, ինչը կբացառի կենդանիների մուտքը:

Նախատեսվող շինարարական աշխատանքների արդյունքում հանվելու է 75422մ³ ծավալով հողային զանգված, որից հետլցման աշխատանքների համար օգտագործվելու է 47063մ³-ը (2000մ³ ծավալով բուսահողը ներառյալ), իսկ մնացած՝ 28359մ³ ծավալով մնացորդային գրունտը տեղափոխվելու է աղբավայր: Բուսահողը անջրաթափանց թաղանթով/ծածկով պահվելու է նոր կառուցվող վաքաշարի հարևանությամբ՝ վաքաշարի և նոր կառուցվող մոտեցման ճանապարհի միջև: Վաքաշարի մոնտաժման աշխատանքներից հետո բուսահողն ամբողջությամբ օգտագործվելու է վաքաշարի հարակից տարածքի վերականգման և հարթեցման համար: Յուրաքանչյուր դյուկերի կառուցման համար հանված հողից հետլցման ենթակա հողը պահվելու տարածքի հարևանությամբ՝ փակ անջրաթափանց թաղանթով/ծածկով՝ փորված հատվածի հետլցման համար օգտագործելու նպատակով: Աղբավայր տեղափոխվող հողը առանց տեղադրման, փորման աշխատանքից անմիջապես հետո հեռացվում է:

Դյուկերները հանդիսանալով «Հարստացուցիչ ֆաբրիկա - Պոչատար - Արծվանիկ պոչամբար» համակարգի բաղկացուցիչ մասը, դրանց հետ կապված ռիսկերի կառավարումն իրականացվում է «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի պոչանքային տնեսության «Արտակարգ պատահարների կառավարման պլանի» (այսուհետ՝ ԱՊԿՊ) համաձայն:

Դյուկերային անցումներում վթարների կանխարգելման նպատակով պարբերաբար իրականացվում են ստուգումներ: Ստուգվում է խողովակների մաշվածության աստիճանը՝ բարձր ճշտության սարքերով: Այն հատվածներում, որտեղ մաշվածության աստիճանը բարձր է, իրականացվում են վերականգնողական աշխատանքներ: Կոմբինատի

աշխատանքի անվտանգության բաժնի կողմից մշտապես իրականացվում են ստուգայցեր և կազմվում է կատարողական՝ հայտնաբերված անհամապատասխանությունների շտկման նպատակով:

Նախատեսվող գործունեության շինարարության փուլում հիմնական ջրապահանջը և ջրահեռացումը կանխատեսվում է հետևյալ գործընթացներում՝

1) Դյուկերների նոր խյուսատար խողովակների կառուցման շին.հրապարակների ջրցանման համար (անվերադարձ կորուստ),
2) Շին. հրապարակում կապալառու կազմակերպության անձնակազմի խմելու տնտեսական կարիքների համար (տնտեսակենցաղային կեղտաջրերի առաջացում):

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության տեղեկատվության, բոլոր 3 բաղադրիչների/դյուկերների կառուցման ընթացքում կպահանջվի 1100.2մ^3 ջուր, որից 378մ^3-ը՝ տեխնիկական նպատակով, իսկ 722.2մ^3-ը՝ խմելու տնտեսական նպատակով: Թե տեխնիկական և թե խմելու տնտեսական որակի ջուրը շին. հրապարակներ և շինարարական ճամբար մատակարարվելու են Կոմբինատից: Հաշվի առնելով Կոմբինատի ջրօգտագործման և ջրահեռացման հաստատված նորմաները, կառուցման փուլում օգտագործվող ջրի ծավալը էական ազդեցություն չի թողնի ջրային ռեսուրսների և առհասարակ ջրասպառման վրա: Համաձայն կատարված հաշվարկների շինարարության փուլում կառաջանա 707.6մ^3 ծավալով կեղտաջրեր: Շինարարական ճամբարում առաջացող տնտեսակենցաղային կեղտաջրերը կուտակվելու են շարժական տնակների ներսում կահավորված սանհանգույցի բաքում, որոնք ըստ անհրաժեշտության հեռացվելու են համայնքային կոմունալ ծառայության կողմից: Առաջացող կեղտաջրերից ջրային ռեսուրսների վրա ազդեցություն չի կանխատեսվում:

«ԶՊՄԿ» ՓԲԸ-ի արտադրական գործունեության՝ մթնոլորտային օդի որակի վրա ազդեցությունը գնահատելու նպատակով, Կոմբինատի բնապահպանական բաժնի կողմից պարբերաբար իրականացվում են փոշու, ազոտի օքսիդների (NO, NO_2), ածխածնի օքսիդների (CO, CO_2), ծծմբային անհիդրիդի (SO_2) և օզոնի փաստացի խտությունների/կոնցենտրացիաների գործիքային չափումներ և մշտադիտարկում՝ հետևյալ կետերում՝

- ԶՊՄԿ վարչական շենքին կից հրապարակ,
- Բացահանք 1,
- Բացահանք 2 (մետաղի թափոնների պահեստի մոտ),
- Քաջարան քաղաք, №1 Մանկության մոլորակ մանկապարտեզի տարածք,
- Արծվանիկի պոչամբարի մոտակայքում
- Ազդեցության գոտուց դուրս:

Մթնոլորտային օդի մոնիթորինգի անի արդյունքները ներկայացված են ՇՄԱԳ հաշվետվության հավելվածներում: Մշտադիտարկման վայրերում մթնոլորտային օդի որակը բնութագրող աղտոտիչների փաստացի կոնցենտրացիաները չեն գերազանցում բնակավայրերի համար սահմանված առավելագույն և միջին օրական ՍԹԿ-երը:

Թիվ 1, 2 և 4 դյուկերային անցումներում նոր խյուսատար խողովակների կառուցման փուլերում մթնոլորտային արտանետումներն ընդհանուր հաշվարկվել են 20.868տ: Առավելագույն փոշու արտանետումները կդիտվեն թիվ 2 դյուկերի խյուսատար խողովակի կառուցման հողային աշխատանքների ընթացքում: Տրանսպորտային միջոցների և շինարարական տեխնիկայի շահագործումից գազանման արտանետումների առավելագույն ծավալները դիտվում են թիվ 4 դյուկերի նոր խյուսատար խողովակի կառուցման արդյունքում /մասնավորապես CO-ի գումարային արտանետումները կլինեն՝ 0.3376 գ/վ, իսկ NOx-ինը՝ 0.1639գ/վ: Սակայն, դրանք հիմնականում

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

շարժական աղբյուրներից (mobile polluter) են, արտանետումների տեսակը մերձգետնյա է (արտանետման աղբյուրի բարձությունը չի գերազանցում 3 մ-ը), հետևաբար չեն կարող ցրվել համեմատաբար մեծ հեռավորությունների վրա և ԶՊՄԿ-ի գազային արտանետումների հետ միասին ունենալ համալիր ազդեցություն: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում մթնոլորտային օդի վրա կանխատեսվող տնտեսական վնասի հաշվարկման արդյունքների համաձայն այն գնահատվել է 2587157 ՀՀ դրամ:

Փոշու և գազանման արտանետումների ցրումը մթնոլորտ նվազեցնելու նպատակով թիվ 1, 2 և 4 դյուկերների նոր խյուսատար խողովակների կառուցման աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկու առանձին փուլերով՝ խուսափելով գազանման արտանետումներ առաջացնող շին. տեխնիկայի միաժամանակյա օգտագործումից: Բացի այդ, շինարարության ընթացքում մթնոլորտ փոշու արտանետման քանակը նվազեցնելու նպատակով կառուցման համար անհրաժեշտ բետոնը բերվելու է բետոնախառնիչ մեքենայով, այդպիսով բացառելով շին. հրապարակում բետոնի ստացման աշխատանքները, ինչպես նաև բոլոր հողային աշխատանքների ժամանակ իրականացվելու է շին. հրապարակի ջրցան, ինչը նույնպես նվազեցնում է փոշու արտանետումը մթնոլորտ:

Թիվ 1, 2 և 4 դյուկերային անցումներում նոր խյուսատար խողովակների կառուցման ընթացքում առաջացող թափոնների հաշվարկը, որը կատարվել է նախատեսվող գործունեության իրականացման համար անհրաժեշտ բնառեսուրսների և նյութերի ծախսի, ինչպես նաև նորմատիվ փաստաթղթերով սահմանված նորմերի հիման վրա, բերված է ՇՄԱԳ հաշվետվությունում: Առաջացող թափոնների համար շին. հրապարակում նախատեսված են լինելու պահման հարթակներ: Եռակցման խարամը տոհավաքվելու է կենցաղային աղբի հետ միասին մետաղական կոնտեյներների մեջ և պարբերաբար հեռացվելու է մոտակա աղբավայր: Չտեսակավորված սև և գունավոր մետաղների ջարդոնը հավաքվելու է շին. հրապարակում և հանձնվելու մասնագիտացված ընկերությունների: Շինարարական աղբը հեռացվելու է համապատասխան կազմակերպության կողմից, որի հետ Ընկերությունը աշխատում է պայմանագրային հիմունքներով: Հողային հանույթը պահվելու է դատարկ ապարների լցակույտերի հետ միասին: Հաշվի առնելով թափոնների հետ գործածության վերոնշյալ գործողությունները, ինչպես նաև Հաշվետվությունում բերված թափոնների կառավարման միջոցառումները, կարելի է փաստել, որ առաջացող թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն չի թողնի:

Նոր խյուսատար խողովակների կառուցման փուլերում կապալառու կազմակերպության կողմից օգտագործվող տրանսպորտային միջոցները և շին. տեխնիկան սպասարկվելու ու նորոգվելու են մասնագիտացված կենտրոններում, իսկ տրանսպորտային միջոցները լիցքավորվելու են Քաջարան քաղաքի լցակայաններում, ինչի պարագայում թափոնների քանակը կկրճատվի: Շինարարական հրապարակում միայն լիցքավորվելու են բուլդոզերները, էքսկավատորները և ավտոամբարձիչները: Այդ նպատակով, շին.հրապարակում տեղադրվելու են 1մ^3 տարողության վառելիքի բաքեր՝ հագեցած հատուկ հակավթարային տակդիրով, որոնց կողքին տեղադրվելու են հրդեհամարման առաջնային միջոցներ: Այլ հեղուկ նյութերի պահումը իրականացվելու է տակառների մեջ՝ տեղադրված հատուկ տակդիրի վրա:

Դյուկերների, ինչպես նաև դրանց սպասարկման տարածքների կառուցման համար նախատեսված հողատարածքները սեփականության իրավունքով պատկանում են «ԶՊՄԿ» ՓԲԸ-ին: Կառույցների համար անհրաժեշտ հողատարածքի մակերեսը կկազմեն՝ թիվ 1 դյուկերի համար - 1100 մ^2, թիվ 2 դյուկերի համար - 700 մ^2, թիվ 4 դյուկերի

համար - 5700 մ²: Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած տնտեսական վնասի հաշվարկման արդյունքների համաձայն, վնասը գնահատվել է 24720000 ՀՀ դրամ:

Բոլոր երեք դյուկերների հատվածում աղմուկի հիմնական աղբյուրը համայնքային ճանապարհներով երթևեկող տրանսպորտային միջոցներն են: Քանի որ առավել ինտենսիվ տրանսպորտային հոսքը դիտվում է Դյուկեր 1-ի տակով անցնող և դեպի Գեղի գյուղը տանող ճանապարհին, Դյուկեր 1-ի մոտակայքում՝ Կավճուտ գյուղում, իրականացվել են աղմուկի գործիքային չափումներ, որոնց արժեքը ցերեկային ժամերին կազմել է 52 դԲԱ, իսկ գիշերային ժամերին՝ 43 դԲԱ, ինչը չի գերազանցում համապատասխանաբար 55 դԲԱ և 45 դԲԱ աղմուկի թույլատրելի մակարդակները/: Եթադրվում է Դյուկեր 2-ի և Դյուկեր 4-ի մոտ աղմուկի ցերեկային և գիշերային արժեքները կլինեն համապատասխանաբար՝ 52 դԲԱ-ից և 43 դԲԱ-ից ցածր: Կարելի է փաստել, որ նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում առաջացող աղմուկը ազդեցություն չի թողնի բնակավայրերի բնակիչների վրա: Թրթռման ազդեցության գոտին տարածվում է 40 մ-ի վրա, հետևաբար նույնպես չի կարող ազդել բնակչության վրա:

Քանի որ աղմուկի ազդեցություն կդիտվի նաև բնակավայրերով տրանսպորտային միջացների երթևեկելու արդյունքում, որպես կարևոր պայմաններ անհրաժեշտ է՝

- դադարեցնել տրասնպորտային միջոցների և շինտեխնիկայի աշխատանքը գիշերային ժամերին,
- նվազեցնել բեռնատար մեքենաների արագությունը (պահպանել առաջարկվող արագությունը) բնակավայրերում,
- նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը՝ դրա իրականացման ժամանակահատվածի մասին իրազեկել հարակից տարածքների բնակիչներին և հաստատություններին:

Թիվ 1, 2 և 4 դյուկերների խյուսատար խողովակների կառուցման համար ընտրված կապալառու կազմակերպության/ների կողմից՝ մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը, պետք է մշակվի հնարավոր արտակարգ պատահարների կանխարգելման և արտակարգ իրավիճակներին պատրաստվածության պլան, որում ներառվում են կատարման ենթակա մի շարք միջոցառումներ: Շինարարական աշխատանքները գործող թիվ 1, 2 և 4 դյուկերային անցումների տարածքներում ուղեկցվելու են համապատասխան մեղմացնող միջոցառումների կատարմամբ, որոնք կնվազեցնեն կամ կկանխարգելվեն շրջակա միջավայրի և բնակչության վրա հնարավոր վնասակար ազդեցությունները: Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման արդյունքները և մեղմացնող միջոցառումները ամփոփվել են ՇՄԱԳ հաշվետվության բնապահպանական և սոցիալական միջոցառումների պլանում: Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման փուլերի համար կազմվել է բնապահպանական մշտադիտարկման պլան: Որպես մշտադիտարկման վայրեր նախատեսվել է թիվ 1, թիվ 2 և թիվ 4 դյուկերների տարածքները, որպես մշադիտարկման հարաչափեր և օբյեկտներ դիտարկվել են մթնոլորտային արտանետումները, աղմուկը և թրթռումը, թափոնների պահման հարթակները, շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակը, արտակարգ պատահարներ և վթարները, աշխատողների անվտանգությունը/:

Ներկայացված գործունեության տարածքները չեն առնչվում բնապահպանական տարածքների և պատմամշակութային հուշարձանների հետ, վերջիններից գտնվում են զգալի հեռավորությունների վրա: Կենսաբազմազանության գույքագրման և մոնիթորինգի համար «ՀՊՄԿ» ՓԲԸ-ի կողմից իրականացվում են հոմբուսների և նրա հարակից

տարածքների կանսաբազմազանության ուսումնասիրություն /ամփոփագիրը ներկայացված է ՇՄԱԳ հաշվետվության Հավելվածներում/:

Պատճառաբանական մաս. Գնահատման և փորձաքննության գործընթացներում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով ազդակիր համայնքում/բնակավայրում (Քաջարան համայնք) անցկացվել են հանրային լսումներ, որին մասնակցել է նաև Կապան համայնքի շահագրգիռ հանրությունը՝ որպես ազդակիր: Լսման մասնակիցների կողմից հավանության է արժանացել նախատեսվող գործունեության իրականացումը:

Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով՝ որպես գործընթացի մասնակիցներ, պետական մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացված կարծիքները, դիտողություններ և առաջարկությունները Կոմբինատի կողմից ևս հաշվի են առնվել հաշվետվությունը լրամշակելիս:

Հարկ է նշել, որ նախատեսվող գործունեությաունն՝ իր տեխնիկական լուծումներով միտված է դյուկերների շահագործման ընթացքում անվտանգության ապահովմանը և հնարավոր արտակարգ իրավիճակների ռիսկերի կանխարգելմանն ու նվազեցմանը և ինչպես շրջակա միջավայրի պահպանության այնպես էլ սոցիալական անվտանգության տեսանկյունից այն դիտարկվում է դրական: Նախագծով նախատեսված փոփոխությունների արդյունքում ակնկալվում է ոչ միայն պոչանքների կառավարման գործընթացի բարելավում, այլև հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների կանխարգելում կամ նվազեցում արտադրական գործընթացներում: Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են ՇՄԱԳ հաշվետվության բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

Նախատեսվող գործունեությունը դրական սոցիալական ազդեցություն կունենա նաև ազդակիր՝ Քաջարան և Կապան բազմաբնակավայր համայնքների համար: Շինարարական աշխատանքների ընթացքում, որոնք տևելու են մոտ 2 տարի, հնարավորություն կստեղծվի մոտակա բնակավայրերի բնակիչներին ներգրավվելու այդ աշխատանքներում: Նոր աշխատուժի առկայությունը կնպաստի նաև սպասարկման ոլորտի ակտիվացմանը: Շինարարության փուլում ժամանակավոր բացասական ազդեցություն կդիտվի՝ պայմանավորված գործող ճանապարհներով շինարարական նյութեր և հողային հանույթ փոխադրող տրանսպորտային միջոցների հոսքի մեծացմամբ: Սակայն, այդ ազդեցությունը կլինի ժամանակավոր և էական ազդեցություն չի թողնի երթևեկության ծանրաբեռնվածության վրա:

Փորձաքննական պահանջներ

1. Գործունեության իրականացման ընթացքում, անհրաժեշտ է նախագծման նորմատիվներին և բնապահպանական պահանջներին համապատասխան ապահովել տեխնոլոգիական լուծումները և ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացումը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական և շահագործման հետ կապված բոլոր նորմերը պահպանելու համար:
2. Ապահովել շահագործման ընթացքում խողովակաշարի/պոչատարի և դյուկերների կոնստրուկցիաներին ներկայացվող պահանջները՝ զննման, նորոգման, մաքրման, դատարկման, ջրազատիչ և ջրընդունիչ համակարգերի գործընթացներում և հնարավոր պատահարների/վթարների կանխարգելման նպատակով առաջնորդվել՝ Կոմբինատի կողմից մշակված՝ «Խողովակաշարում/պոչատարում և դյուկերներում հնարավոր

պատահարների/ վթարների կանխարգելման և մեղմացման» պլանով նախատեսված գործողությունների կատարմամբ:
3. Քանի որ Զանգեզուրի պղինձմոլիբդենային հանքավայրի արդյունահանման համալիրի ենթակառուցվածքները փոխկապակցված են, դյուկերները և խողովակաշարը հանդիսանում են պոչամբարային տնտեսության բաղկացուցիչ մաս, անհրաժեշտ է ենթակառուցվածքների փոփոխված նախագծի փաթեթը (պոչամբար, պոչատար, պոչատարի ենթակառուցվածքներ և այլն) ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
4. Շինարարության և շահագործման փուլերում ջրային ռեսուրսների վրա բացասական ազդեցությունները բացառելու նպատակով առաջնորդվել՝ ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի N 64-Ն որոշման պահանջներով և ապահովել վթարային արտահոսքերի հավաքման, հեռացման հարմարանքների անխափան աշխատանքը:
5. Թիվ 1, 2 և 4 դյուկերների տարածքում ապահովել շինարարության և շահագործման փուլերի համար նախատեսված մշտադիտարկումների իրականացումը և հաճախականությունը, Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված շրջակա միջավայրի բաղադրիչների նկատմամբ մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
6. Շինարարության փուլում շինարարական հրապարակից դուրս փոշու տարածումը կանխարգելելու նպատակով առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով (ըստ անհրաժեշտության ցանկապատել շինարարական հրապարակը, ջրցանել, սորուն նյութերը և հողային զանգվածները ծածկել անթափանց թաղանթով, բացառել շինարարական աղբի կուտակումները տարածքում, շինարարական աղբը և սորուն նյութերը տեղափոխել փակ ծածկով մեքենաներով՝ հատուկ սահմանված երթուղիներով, հատուկ վայրեր և այլն):
7. Հողային աշխատանքների արդյունքում հանված բուսահողի պահպանման և օգտագործման միջոցառումներն իրականացնել օրենսդրական պահանջներին համապատասխան՝ ժամանակավոր կուտակված հողը օգտագործել ԶՊՄԿ-ի կողմից խախտված տարածքների վերականգնման աշխատանքներում:
8. ԶՊՄԿ-ի տարածքում շինարարության ընթացքում առաջացող թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան (վտանգավոր թափոնների գործածությունը՝ որպես լիցենզավորման ենթակա գործունեություն, իրականացնել համապատասխան լիցենզավորված կազմակերպության կողմից):
9. Շինարարության և շահագործման ընթացքում առաջնորդվել ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 01-Ն և 2002 թվականի մարտի 6-ի թիվ 138 հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՄԿ» ՓԲԸ-ի Արծվանիկի պոչամբարային տնտեսության թիվ 1, 2 և 4 դյուկերային անցումներում նոր խողովակաշարերի կառուցման նախագծային փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը

տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան